

«Արմենիա թի վի» ՓԲԸ

«Մարդկային գործոն» հաղորդաշարին

«Մարդկային գործոն» հաղորդաշարի կողմից Օհանավան գյուղի բնակիչ Մելանյա Միրզոյանի՝ Օհանավանի խորհունտեսության 1990թ. մայիսի 3-ի թիվ 85 հրամանով հանգուցյալ ամուսնու՝ Համլետ Առաքելյանին որպես առանձին ծուխ <<Մուրադի Չիմեր>> կոչվող տարածքում հատկացված 0.12 հա տնամերձ հողամասի, եւ այն թիվ 58 համարի տակ համարակալելու հարցի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ խնդրին ամբողջությամբ իրազեկված է մարզի ղեկավարությունը, եւ դրա լուծման գործընթացը գտնվում է մարզպետի ուշադրության ներքո: Ուստի, Արագածոտնի մարզպետարանի համապատասխան բաժնից իրավասու անձի մասնակցությունը հարցի քննարկմանը նպատակահարմար չենք համարում:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

22.05.2014թ.